



www.armstat.am



www.worldbank.org

ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ (21.12.2007թ.)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ Վիճակագրական վերլուծական - զեկույց (մամուլի հաղորդագրություն)

2006 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում 5184 տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա կազմված «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցը միտված է արտացոլելու Հայաստանի սոցիալական վիճակի և կենսամակարդակի փոփոխությունները: Սույն զեկույցը թվով ութերորդն է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ամենամյա պարբերականությամբ հրատարակվող համանուն զեկույցների շարքում: Նշյալ զեկույցների հիմնական նպատակն է տրամադրել տեղեկատվություն երկրում աղքատության մակարդակի և սոցիալական վիճակի վերաբերյալ: Համաշխարհային Բանկի համար սույն զեկույցը մասն է կազմում Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման ծրագրի, որի նպատակն է ոչ միայն վերլուծել և դիտարկել Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակն ու աղքատության մակարդակը, այլև աջակցել ՀՀ ԱՎԾ-ին և ՀՀ կառավարությանը կառուցելու տնային տնտեսություններից ստացվող որակյալ տվյալների

կայուն համակարգ և կատարելագործել Հայաստանի մասնագետների այդ տվյալները վերլուծելու և աղքատության մակարդակի փոփոխությունները վերահսկելու կարողությունները:

Թեև զեկույցի հիմքում հիմնականում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներն են, օգտագործված են նաև ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների վարչական վիճակագրական ամբողջական ցուցանիշները:

Կայուն և շարունակական տնտեսական աճը, աշխատաշուկայի կայունացումը և աշխատավարձերի, կենսաթոշակների ու այլ սոցիալական տրանսֆերտների աճը, ինչպես նաև արտասահմանում աշխատողներից ստացվող մասնավոր տրանսֆերտների կայուն աճը կրճատել են եկամուտների և սպառման բաշխվածության անհավասարությունը և հանդիսացել են աղքատության կրճատման հիմնական լծակները: 2006 թվականի արդյունքներով նվազել է թե՛ աղքատության մակարդակը, թե՛ աղքատության սրությունը: Այդուհանդերձ, աղքատությունը դեռ շարունակում է խնդիր լինել Հայաստանի համար, քանզի բնակչության 26.5%-ը (ավելի քան 850 հազար մարդ) աղքատ է, իսկ նրանցից ավելի քան 130 հազարը՝ ծայրահեղ աղքատ են: Աղքատությունը շարունակում է նկատելի բարձր մնալ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում, իսկ Երևանն առավելագույնն է օգտվել տնտեսական աճից: Գյուղական բնակավայրերում գրանցվել է աղքատության մակարդակի կրճատման (2004թ.-ի համեմատ) ավելի բարձր տեմպ, թե՛ հանրապետական միջինի և թե՛ բոլոր քաղաքային բնակավայրերի համեմատ:

2004-2006թթ.-ի համար օգտագործվել է աղքատության մակարդակի գնահատման ճշգրտված մեթոդաբանությունը, որն առաջին անգամ ներդրվել է 2004թ.-ին Համաշխարհային Բանկի փորձագետների աջակցությամբ:

Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության գծից, իսկ **շատ աղքատ** կամ ծայրահեղ աղքատ գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել պարենային, կամ ծայրահեղ աղքատության գծից:

2006թ.-ին աղքատության ընդհանուր գիծը և պարենային գիծը՝ արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով (մեկ ամսվա համար) կազմել են համապատասխանաբար 21555 և 14300 դրամ:

Աղքատության խորության 3.8 տոկոս գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ, և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի 3.8 տոկոսին համարժեք ռեսուրսներ և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե աղքատության խորությունը հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա այն ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ այն ցույց է տալիս, թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը: Այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ:

Աղքատության հիմնական ցուցանիշները

Աղքատության հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը 2004-2006թթ.-ին, տոկոսներով

	2004թ.		2005թ.		2006թ.					2006/ 2004	
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսը ողջ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության արտաքինություն	Շատ աղքատ	Աղքատ
Քաղաքային բնակավայրեր	7.5	36.4	5.3	30.7	5.0	28.2	63.6	4.4	1.3	-33.3	-22.5
Երևան	6.1	29.2	3.6	23.9	3.5	21.0	32.7	2.4	0.7	-42.6	-28.1
Այլ քաղաքներ	9.2	43.9	7.2	37.8	6.6	35.8	30.9	6.4	2.0	-28.3	-18.5
Գյուղական բնակավայրեր	4.4	31.7	3.2	28.3	2.4	23.4	36.4	3.0	0.7	-45.5	-26.2
Ընդամենը	6.4	34.6	4.6	29.8	4.1	26.5	100.0	3.8	1.1	-35.9	-23.4

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 2004-2006թթ.

2004-2006թթ.-ի ընթացքում Հայաստանում աղքատությունը նկատելի նվազել է: Մոտ 260 հազար մարդ կարողացել է դուրս գալ աղքատությունից, իսկ աղքատ բնակչության մասնաբաժինը կրճատվել է 23.4 տոկոսով՝ 2004թ.-ի մոտ 35 տոկոսից՝ մոտ 27 տոկոսի 2006թ.-ին: Առավել արագ նվազել է ծայրահեղ աղքատության մակարդակը՝ մոտ 36 տոկոսով. 2004թ.-ին արձանագրված 6.4 տոկոսից՝ 2006թ.-ին կազմելով 4.1 տոկոս: Այսպիսով, 260 հազարից մոտ 75 հազարը շրջանցել են ծայրահեղ աղքատությունը: Աղքատության գծի նկատմամբ աղքատների սպառման պակասությունը, տոկոսներով արտահայտված, կազմել է 15 տոկոս՝ նվազելով 2004թ.-ին արձանագրված 21 տոկոսից:

Հայաստանում աղքատության մակարդակի կրճատումը պայմանավորող առավել կարևոր գործոնը կայուն և առաջանցիկ տնտեսական աճն է: Ինչպես բացահայտում են 2006թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները, ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2004թ.-ի համեմատ ավելացել է 25.7 տոկոսով: Առավել արժեքավոր է այն, որ այդ աճը նկատվել է սպառման բոլոր քվանտիլային խմբերում:

Մայրաքաղաք Երևանը, որտեղ կենտրոնացված են հիմնական տնտեսական հնարավորությունները, առավելագույնն է օգտվել տնտեսական աճից, քանզի այստեղ գրանցվել է աղքատության կրճատման ամենաբարձր տեմպը (2004թ.-ի համեմատ 28.1 տոկոսով): Իսկ Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում, աղքատության կրճատման տեմպը համեմատաբար ցածր է (18.5 տոկոս) և բնակչության այդ խումբը դեռ շարունակում է մնալ Հայաստանի բնակչության ամենաաղքատ հատվածը: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը քաղաքաբնակներ են: 2004-2006թթ.-ին աղքատության մակարդակի կրճատման տեմպը գյուղական բնակավայրերում ավելի բարձր է, քան քաղաքային բնակավայրերում:

Եկամուտների կամ սպառման անհավասարաչափ բաշխման աստիճանը բնակչության տարբեր խավերի միջև որոշվում է Ջինիի գործակցով: Դիտարկվող ժամանակահատվածում (2004-2006թթ) փոքր ինչ նվազել է անհավասարությունը ըստ եկամտի ցուցանիշի: Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բեռնացումն ավելի խորն է ըստ եկամուտների ցուցանիշի՝ սպառման ցուցանիշի համեմատ: Ջինիի սպառման գործակցը, 2006թ.-ին՝ 2004թ.-ի համեմատ, գրեթե չի փոփոխվել, մինչդեռ Ջինիի գործակցին ըստ եկամուտների՝ նվազել է 0.026 միավորով և կազմել 0.369՝ 2004թ.-ի 0.395-ի համեմատ:

Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ բնակչության սուբյեկտիվ գնահատականները.

2006թ.-ի հետազոտության ընթացքում տնային տնտեսության 16 և բարձր տարիքի առկա անդամները պատասխանել են նաև մի շարք հարցերի, որոնց հիման վրա ստացվել է կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը:

Աղքատությունը կարելի է դիտարկել որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավիճակ: Հայաստանում սոցիալ տնտեսական պայմաններին տրված սուբյեկտիվ գնահատականները (իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետները) շատ ավելի ցածր են մեկ չափահասին համարժեք սպառման ագրեգատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի համեմատ: Իրենց ծայրահեղ աղքատ են համարել միայն 1.9 տոկոսը՝ 4.1 տոկոս մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակի համեմատ: Նմանապես, իրենց աղքատ գնահատել են 14.6 տոկոսը՝ մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով գնահատված 22.4 տոկոսի համեմատ: Այդ իսկ պատճառով աղքատության ընդհանուր մակարդակը 2006թ.-ին ըստ ինքնագնահատման կազմել է 16.5 տոկոս, իսկ մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով՝ 26.5 տոկոս:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցը հասանելի է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության բաց գրադարանում (721 սենյակ) և ինտերնետային էջից՝ <http://www.armstat.am/arm/Publications>: